Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 1892 ԹԻՒ 18

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ՌՈՒԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օսմանեան Պետութեան ւմօտալուտ կործանումն. — Ամերիկայի Հայերն. — Ժողովրդային Ակտաբանութիւն. — Հընտախտի նոր դարմաններ. — Նամակ Կ. Պոլսէն. — Հայկական առածք և ասացուածք Ակնայ. — Հրէայք ի Հայոց թէ Հայք ի Հրէից. — Քաղաքական, Ազգային և զանազան Լուրեր։

Ահա կը լրանայ Լոնտոնեան ԼԱՌՄԷՆԻ թերթին տարեշրջանն։ «Լ'Առմէնի» պատուական թերթ մ'է և յոյժ կարեւոր ծառայութիւն կը մատուցանէ հայկական դատին։ Մինչև անգամ երբ բոլոր եւրոպեան թերթեր լուռ մնան, Լառմէնի կը խօսի շարունակ և հանրային ուշադրութեան թոյլ չտար գլխովին մոռնալ մեր խընդիր։ Պէտք է նաև դիտել թէ Մեծարգոյ խմբագիրն չչատանար թերթին հրատարակութեամբ այլ և յաճախ դիւանագիտական թղթակցութիւններ կ'ընէ և բազում գաղթականութեանց և զանազան խմբոց ազգային յանձնարարութիւններն կը կատարէ, հեռագիրներ հաղորդելով, նուէրներ յանձնելով հայասէր քաղաքագիտաց և այլն։ Երբեմն կը բանախօսէ նաև այլ և այլ ընկերութեանց մէջ հայկական նիւթոց վերայ։

Ամեն հայրենասիրի յայտնի պարտաւորութիւնն է «Լ'Առմէնի»ին բաժանորդներն շատցունել և Յանձնախմբոց կամ Ընկերութեանց պարտքն է տարեկան նուիրատուութեամբ մի նպաստել այս անձնուէր և անխոնջ գործիչին ճիշդ որպէս թէ յատկապէս զնա հրաւիրած լինէին որ Պոլիսն թողով գայր յԵւրոպա և նուիրէր ինք զինք այդ սրբազան գործին։

Արդէն կան մի քանի ընկերութիւններ, յուսամք թէ ուրիշներ ալ կը սկսին այս տարի նպաստող լինել Տի. Ղերազի գործին։

«ՀԱՅՔ»ի մէջ այս տարի առողջաբանական յօդուածներն զանց ըրած էինք ցայսվայր՝ առ ի չգոյէ տեղւոյ։ Ներկայ թուով կը սկսիմք շարք մի յօդուածներ հրատարակել «Ժողովրդային Ակտաբանութիւն» խորագրով, նպատակ ունենալով ամփոփել մի քանի դասերու մէջ այնպիսի հիմնական ծանօթութիւններ որոց շնորհիւ կարենայ հասարակութիւնն լաւ ևս ըմբռնել ախտերու պատճառներն և առողջաբանական կանոններն, կարող լինի հիւանդութիւններէ զգուշանալ, և գիտնայ անձին խնամ տանիլ երբ հիւանդ լինի։

Ստիպուած եմք խոստովանիլ թէ «Հայք»ի 1892 թուականին բաժանորդաց առաւել քան հարիւրն ցարդ վճարած չեն իրենց բաժնեգին։ Իններորդ ամիսն ներկայ թուով կը լրանայ, սակայն ոմանք անհոգութեամբ անվճար կը թողուն իրենց պարտք։ Ոմանց թերթ յղել ընդմիջեցինք երկար ամիսներ շարունակ յղած լինելէ յետոյ. ոմանց երկու անգամ դրած և յիշեցուցած եմք իրենց պարաք, այլ ի զուր։ «Հայք»ի նման թերթի մի համար, որ արդէն կարեւոր բաց մի կը թողու թէև բոլոր բաժանորդք վճարեն, շատ ծանր բանէ հարիւր բաժնեգին կորուսանել։

Անտարբեր կամ անհոգ բազմութեան քով բարեբաղդաբար կան նաև ազգայուն խմբեր և ժրաջան անհատներ որք անդադար կը քաջալերեն զմեզ յառաջ երթալ։

Նշանաւոր խմբագրապետ մի կը գրէր մեզ անցեալ օր «Հայք ապագայ ունի, զի արժանիք ունի։»

Նշանաւոր ուսուցչապետ մի կը գրէ մեզ հեռուէն. «Ձեր պատուական թերթը անընդհատ ստանում եմ և հաճութեամբ կարդում։ Արդարեւ մի ծառայութիւն է ազգի առաջ՝ այդպիսի լուրջ, զգուշաւոր, մի և նոյն ժամանակ ողջամիտ հայրենասիրութեամբ տոգորուած մի թերթի գոյութիւնը, որ նպատակ ունի արծարծել ազգային ինքնաճանաչութեան կայծը հեռաւոր գաղթական մեր եղբայրների մէջ և կարելոյն չափ նպաստել ազգային դատի ընթացքին և գոհացուցիչ լուծման գործին։»

Ազգին ուսումնական բարձրագոյն շրջանին պատկանող անձանց կողմանէ այսպիսի գնահատում անգին է մեզ և կարի խրախուսիչ արդարև։

Փոյթ չէ եթէ մի քանիներ կը ջանան՝ անխոստովանելի չարժառիթներէ մղեալ՝ մոլորցունել պարզամիտներն մեզ նկատմամբ։ Ձիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի։

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՄՕՏԱԼՈՒՏ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ

Ա.

Մարդարէական շնորհայ պէտք չ'կայ գուշակելու համար թէ օսմանեան պետութեան օրերն համրուած են։

Երբ ալեւորեալ և կորաքամակ տեսնեմք զոք, կը հասկանամք թէ վախճանն շատ հեռու չէ։ Պատմութեան ուսանողն ալ գիտէ թէ տէրութիւն մի ինչ նշաններ կուտայ երբ կործանման մօտ է։

Մարդիկ կան որք ի հասակի ութսուն ամաց դեռ առոյգ են և 30—40 տարի ևս ապրելու յոյս կ'ընծայեն. մարդիկ ալ կան որք կը սկսին ծերանալ մինչ հազիւ 40 տարեկան են։ Օսմանեան պետութիւնն վաղահաս և հիւանդոտ ծերութեամբ զառամեալ է։

Այն զոր Եւրոպա «Մեծ Թուրքն,» «le Grand Turc,» կը կոչէր ժամանակին, այժմ կը մականուանի «Հիւանդ Մարդն,» «L'Homme Malade» «the Sick Man»։

Բ

Սուլթան Համիտ չարաչար կ'աշխատի իւր տէրութիւն բժշկելու, բայց դեղերն աւելի վնաս կ'ընեն քան օգուտ։

Սուլթան Ապտիւլ Ազիզ Եւրոպայէն փոխ դրամ առաւ, Սուլթան Ապտ Իւլ Համիտ Եւրոպայէն մարդ փոխ կ'առնու. այլ այդպիսի արտաքին դարմաններով չբժշկուիր տէրութիւնն։

Թուրքն ծոյլ կեանքի և դիւրին ապրուստի վարժուած լինելով՝ բթացած է մտօք և յուլացած է բնաւորութեամբ։ Մայրաքաղաքին և մեծ քաղաքաց Թուրքն յաճախ դիւրին պաշտօններով անցուցած է կեանքն, իւր մեծ հոգն լինելով ոչ թէ պաշտօնն քաջ կատարել այլ իւր գերակայից հաճելի լինիլ։

Միւս կողմանէ ցոփ և հեշտասէր կենցաղի մէջ նոր սերունդք տկարացած և այլասեռած են իկ. Պոլիս։ Թրքաց ցեղական արդատաւորութիւնն շատ նուազած է։

Ժամանակին երբ դեռ բիրտ ոյժն ու քաջութիւնն պայմանք էին զօրութեան, Թուրքն հզօր էր և յաղթող. այլ յորմէ հետէ կարգապահութիւնն և գիտութիւնն անհրաժեշտ պայման դարձած են զինուորական և քաղաքային բարեյաջողութեան, Թուրքն ողբալի կերպիւ ետ մնացած է։

Ցիրաւի հարիւրաւոր վարժարաններ, արական և իգական, նախնական և երկրորդական, բացուած են ի մայրաքաղաքին և ի գաւառս, բայց արդիւնք չնչին եղած է։

Հարիւրաւոր Թրքեր եւրոպեան բարձր վարժարանաց մէջ ուսում առած են և վերադարձած, սակայն առանց եւրոպեան լուսաւորութիւնն իրացուցած լինելու։

Հող կայ ուր եթէ ցորեն սերմանես, հաճար կը բուսնի։ Վատ հողն կ'այլասեռէ լաւ սերմն։

Թերևս անհնար չլինի ուսեալ և սրամիտ Թրքեր ցուցնել այսօր, բայց տարակուսելի է թէ ոք կարենայ մատնացոյց ընել մէկ հատ Թուրք որ կարենայ բաղդատուիլ եւրոպական ազգաց մեծ մարդոց հետ։

Օսմանեան քայքայուող տէրութիւնն փրկելու ահագին գործին գլուխն անցնելու համար Թուրք գործիչն ոչ թէ սրամիտ և ուսեալ միայն պէտք է լինի. այլ և մեծ սրտի և վեհ ոգւոյ տէր, լայնախոհ և ազատամիտ, ճշմարտիւ անձնուէր և հայրենեաց նուիրեալ։

Աշխարհ դեռ այդպիսի Թուրք ճանաչելու հաճոյքն չէ ունեցած։

Եւրոպեան գաղափարաց հետ չփուելու շնորհիւ Թուրքն նոր զօրութիւն չչահելէ զատ՝ կորուսած է հինն ալ։ Շատ թերուս Թրքեր այսօր անկրօն, անհաւատ են։ Ուրեմն կրօնական մոլեռանդութիւնն որ Թրքաց հին զօրութեան մէկ մեծ աղբիւրն էր, ցամաքիլ սկսած է։ Անկրօն Թուրքն քան զիւր նախնիս նուազ զօրաւոր և աւիւնոտ է և նուազ բարոյական կամ իղձամիտ։

Նոր գինին հին տիկի մէջ լեցուած է։ Մահմետականութիւնն չկրնար առանց պատռելու ընդունիլ իւր մէջ եւրոպեան քաղաքակրթութիւնն։

Գ

Եթէ Թուրքն այդքան սպառած և տկարացած է, ի՞նչ կը նշանակէ զօրութեան այն երևոյթն որոյ հանդիսատես է քաղաքակիրթ աշխարհն։ Ինչո՞ւ Սուլթանն անկախ քայքայականութեան հետեւելու կը յաջողի այնպիսի չափով մի որ իւր անմիջական նախորդաց անծանօթ էր։ Ի՞նչպէս կը լինի որ պալատն աննկատ եւրոպեան հանրային կարծեաց՝ Մուսաներն կ'արձակէ և Խրիմեաններն կ'աքսորէ. Քրդերն կը զինէ և քրիստոնեաներն զինաթափ կ'ընէ։ Միթէ զօրութեան գիտակցութեամբ չէ՞ որ Թուրքն ամերիկեան միսիոնարի տունն կ'այրէ Զմիւռնիոյ մօտ, և Ֆռանսական փոխ-հիւպատոսն կը ծեծէ Այնթապի մէջ, և եւրոպացւոց առանձնաշնորհութիւններն կը կրճատէ ամեն ուրեք։

Այդ ամենայ զօրութենէ չեն դար այլ կատաղութենէ։

Առողջ ուժի նշան չկայ այդ արարքից մէջ։ Մահացու տենդէ բռնուած հիւանդ մ'ալ կրնայ անկողնէն ելնել և սոսկալի ուժի նշաններ տալ ուղղիլն այն դրդռեալ վիճակին մէջ որ զառանցանք և զգայախաբութիւն կ'արտադրէ։

Լուսնոտն և խելագարն ալծանր հիւանդ են, թէև երբեմն երկու կամ երեք առողջ մարդիկ հազիւ կը բաւեն զսպել այնպիսւոյն ահագին վայրկենական ոյժն։

Պալատն ալ իւր հիւանդութեան վտանգաւոր վիճակին մէջ յիմար ուժի նշաններ կուտայ, և այն որ իւր զաւակաց խնամակալ հայրն պիտի լինէր կը ծեծէ ու կը կոխոտէ զայնս։

Պաարիարքն յոսկացած ու եւրոպացին չուտրած կրնան երբեմն խրատ տալ շարշարուող ընտանիքին համբերել, մուռ անել, և կրնան զառանցող հիւանդին շողոմիչ խօսքեր ըսել. «Դու յոյժ բարի ես, դու գթած և ողորմած ես, և քո հայրական սիրովդ երջանիկ են քո որդիք.....»

Դժբաղդաբար անոյշ խօսքերն ալ օգուտ չբերին ցարդ, և հիւանդն կը շարունակէ իւր ուժի վերջին մնացորդովն խնալ հայ ժողովրդեան վերայ։ Եւ սա ճմլեալ կը ճչէ. «ազատեցէք զիս, ալ չեմ դիմանար։»

Դ

Մխիթարուէ՛, հայ ժողովուրդ տառապեալ, ցաւոցդ և չարշարանացդ վախճանն մօտ է։ Հիւանդն չկրնար ապրիլ երկար։

Եւ դու, Հայ Գաղթական, անդադար ջանա ամուքել մայր հայրենեաց մէջ կոխոտուող եղբարցդ ցաւերն, ջանա ոյժ և ձեռն տալ նմա իմաստուն կերպով։

Միանգամայն աշխատէ որ արուեստ և ճարտարութիւն ձեռք բերես, նաև փոքր ի շատէ դրամ։ Ջանա շուրջդ գտնուող մարդոց և իրաց լաւ, ազնիւ, սիրուն հանգամանքն տեսնել, սիրել և իրացուցնել։ Եղիր աւելի ճարտար և աւելի լաւ մարդ, որպէս զի երբ Հիւանդն մեռնի և դու վերադառնաս յարևելս, ի միասին տանիր նիւթական և բարոյական գանձ։

Եթէ յեղափոխական գաղափարաց ես համակրիր, եթէ պահպանողական հարուստ մ'ես, ջանա արհեստի և կրթութեան բարիքներուն հաղորդ ընել քո հայրենա-

կիցներ· հայրենեաց դպրոցներուն նպաստէ, անոնց համար լաւագոյն ուսուցիչներ պատրաստէ արտասահմանի մէջ, փոքր կամ մեծ Սանասարեան մ'եղիր, Ջունդ Ասպետ մի, Իզմիրլեան մի կամ Սպարդալեան մ'եղիր: Եթէ մայր հայրենեաց մէջ չես կրնար իրագործել առ այժմ կրթասիրական բաղձանքդ, արտասահմանի մէջ կրնաս գործել — մատենադարան, վարժարան, մամուլ հաստատել՝ զայնս յետոյ ի հայրենիս փոխադրելու դիտաւորութեամբ:

Եթէ յեղափոխական ես, անկարգ անկանոն կերպիւ եռանդ ցոյց տալու փոխան, որով գուցէ աւելի վնաս կ'ընես տառապեալ եղբարցդ, լուրջ ջանք ըրէ խելքի և նիւթական ուժի ընդհանուր կեդրոն մի ստեղծելու որպէս զի ինչ որ արժան է ընել՝ կարելի լինի ընել օրինաւոր և արդիւնաւոր կերպիւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

Այս տարի Ամերիկայի մէջ Հայոց թիւն բաւական աճած է անչուշտ· շատ անգամ եղած է որ մէկ շաբթու մէջ 40—50 Հայ եկած է Թուրքիայէն: Խարբերդու դաշտէն դաղթային հոսանքն դէպ յԱմերիկա շարունակած և ուրիշ շատ կողմերէ ալ առաջին անգամ լինելով այս տարի սկսած են Հայեր գալ:

Տարուէ տարի աւելի կը դժուարանայ գիտնալ թէ որքան Հայ կայ բոլոր Միացեալ Նահանգաց մէջ: Առաջուան պէս Հայերն մի քանի քաղաքներու մէջ չեն դտնուիր այժմ, այլ ցրուած տարածուած են: Նիւ Եորք, Պրուքլին, Վուսթըր, Պոսթըն, Ֆիլատէլֆիա, Հարթֆըրտ, Փրովիտէնս, Լին, Թրոյ, Լովէլ, Ճէրսի Սիթի, Եոնքըրս, Թենաֆլի, Սալեմի, Փաթէրսըն, Սէյլըմ, Լորէնս, Նիւ Հէյվըն, Ֆիշպուրկ, Վունսոքէթ. Ուօշինկթըն, Շիքակօ, Տէթրոյիտ, Փրինսթըն, Ֆրէզնօ, Սան Ֆրանսիսքօ, Պալթիմոր, Պըֆալօ, Մորիս Վիլ, Նանթըքէթ, Պանկոր, Տէմուան, Փոթստամ, Սինսինաթի, Օպէրլին, Սփրինկֆիլտ, Կրէնտ Ռէփիտս, Մատթափան, Պրէտֆորտ, Ալլէնթաուն, Նիւ Լընտրն, Բաթոնա, Բոհոէս, Կրին Այլէնտ, Ֆին, Սթթլպօրօ, Փորթլէնտ, Նիւ Պրիթըն, Բէմիդէլ, Տանպուրկ, Նաշուա, Եընկսթաուն, Սաութ Էմպոյ, Փաթէրսըն (Թէքսաս), Միլֆըրտ, Բոսթրրիլտ, Սէն Լուի, Վոքիկըն են անուանք քաղաքաց և աւանաց ուր գիտեմք թէ Հայեր կան, և անչուշտ դեռ ոչ սակաւ ուրիշ տեղեր ալ Հայեր ցրուած են փոքր թուով:

Թէև ամենայն վիճակագրութիւն կը պակսի, բայց հաւանական հաշուով այս 1892 թուականին առ նուազն հինդ հարիւր Հայ նոր եկած է Ամերիկա, և փոխարէն դուցէ 25 Հայ հազիւ վերադարձած է ի Թուրքիա:

Այս ընթացքով հաւանական է թէ մինչև 10 տարի 20 հազարի հասնի Ամերիկայի Հայոց թիւն, բայց այդ թուոյ փոքր առհարիւրն վերադառնայ: Ի հարկէ հարիւրին երեքն տարուէ տարի կը մեռնին, չըսեմ աւելին: Հարիւրին սաչափն ալ բոլորովին Ամերիկացի կը լինին, վերադարձի ամեն փափաք կորուսանելով և այս երկրի կենցաղին վարժուելով: Ոմանք ալ գոհացուցիչ (չըսեմ շլացուցիչ) վերադարձ մի առ իւրեանց վաղեմի ծանօթս ընելու նիւթական պայմաններէն զուրկ լինելով՝ պիտի ուզեն այս տեղ մնալ ու մեռնիլ: Վերադարձողներուն մեծ մասն պիտի բաղկանայ Խարբերդէն Մալաթիայէն, Բալուէն և նման տեղերէ եկած Հայերէ, որք այս երկրին լեզուին չկրնալով տիրանալ և կեանքին վարժուիլ, միշտ իբրև պանդուխտ պիտի ապրին և երբ քիչ կամ շատդրամ կարենան աւելցուցնել՝ պիտի փութան դէպ ի հայրենիք:

Եթէ Ամերիկա եկող Հայերուն շատն անդրէրէն գիտնային և հոս շատ գոհացուցիչ վիճակի հասնէին, այն ատեն վերադարձողներու թիւն շատ աւելի պիտի նուազէր:

Անչուշտ ազգին համար շատ ծանր կորուստ մ'է իւր որդւոց այսքանն յղել յԱմերիկա, յերկիր հեռաւոր, ուրկէ սակաւք միայն պիտի վերադառնան: Պանդխտութիւնն Հայուն ցեցն եղած է դարերէ ի վեր: Պոլսոյ մէջ պանդխտողներուն ալ բաւական մէկ մասն կը փափանչուշտ, բայց հոն հաստատուողներն դոնէ կը պահպանեն հայրենի լեզուն և ազգութիւնն: Նաև նուազ դըժուար է Պոլսէն ի գաւառս վերադառնալ:

Ամերիկա յոյժ հեռի լինելով աւելի երիտասարդներ կը համարձակին դալ· եկողներու հասակն 15էն 40 է, և միջին տարիքն դուցէ 25 լինի: Արդէն 20էն 40 տարեկան հասակին մէջ մարդ կ'ունենայ իւր առողջադոյն և լաւ կազմուած զաւակներն· բայց Ամերիկայի մէջ այսօր դոնէ 3000 Հայ կայ միջին տարիքի մարդ, որ ոչ միայն ինքն կը տկարանայ, կը ժդունի փոքր ի շատէ, այլ և ամուրի կենօքն հայրենիքն կը զրկէ տարին դոնէ 1500 մանուկներէ, ուստի և անցեալ հինդ տարուան մէջ առ նուազն ութ հազար հայ տղայք մնացած են անդոյ:

Հայրենիքն սպառելու, ազգն փճացնելու ի՞նչ ազդու կերպ:

Բայց այս դառն խորհրդածութիւն ամոքելու բընութիւն ունեցող կողմեր ունի խնդիրն:

Եթէ այդ Հայեր Ամերիկա չդային, չպիտի մնային ամենն ալ հայրենի յարկին տակ· ոմանք պիտի պանդխտէին Պոլիս կամ ուրիշ օտար երկիր: Դրամի նեղութիւնն, աղքատութիւնն աճելով ամ ըստ ամէ, Թուրքիոյ Հայն կը բռնադատուի առաւել երթալ ի խնդիր հացի:

Ցիրաւի Ամերիկայի Հայերն մեծամեծ նեղութիւններ կը կրեն և կ'աշխատին շարաչար, ոմանք կը վնասուին և ոմանք կը մեռնին, բայց վերջապէս Ամերիկայի մէջ չարչարուող Հայ պանդուխտներն աւելի դրամ ձեռք կը բերեն քան ի Տաճկաստան, ի Պոլիս, ի Կոստանդնուպոլիս և այլուր չարչարուող Հայ պանդուխտներն:

Ամերիկայի մեր պանդուխտներն տարին դոնէ 30—40 հազար օսմ· սակի կը յղեն հայրենիք, իրենց ընտանեաց, նոյնքան ալ կ'աւելցուցնեն հոս:

Խարբերդու Հիւսէյնիկ աւանին գրեթէ բոլոր թրքական հողերն Հայոց ձեռքն անցած են վերջին տարիներս, քանզի Հիւսէյնիկէն իրր 500 Հայ պանդուխտ կայ Ամերիկա, որք իրենց վաստակն հողի տուած են: Եթէ այսպէս չարունակէ Հայեր տէր կը դառնան բովանդակ Խարբերդու դաշտին:

Եւ ահա այդ է գլխաւոր պատճառ որ Թուրք կառավարութիւնն բոլոր ուժով կ'արգելու Հայերն Ամերիկա երթալէ: Սխալ է այն կարծիք թէ կառավարութիւնն կը վախէ թէ Հայերն զինուորութիւն կը սովրին այս երկրի մէջ և կ'երթան յետոյ պատերազմիլ Թրքին դէմ: Ո՛չ, նա տնտեսական պատերազմէն կը վախնայ: Նա արդէն իրազեկ է թէ Հայերն տնտեսական գերակշռութիւն ստանալ կը միտին Խարբերդու կողմն:

Կառավարութիւնն գիտէ նաև թէ Հայերն Ամերիկայի մէջ փողոցներէն չեն ժողվեր դրամն, այլ կ'աշխատին տաժանաքիրտն, և կը վարժուին ամերիկեան արդութեան, գործունէութեան, կը սովորին նորանոր գործիներ գործածելու. ոմանք արհեստ կ'ուսանին, այնպէս որ երբ վաղն Եւրոպացիներն Թուրքիոյ մէջ բազմանան և գործ ընեն, Եւրոպացիէն յետոյ քան զամենայն ճարտար և բանգէտ տարրն պիտի լինի Հայն ոչ թէ դանդաղ և ագէտ Թուրքն:

Թուրքիոյ մէջ այսպէս յաւիտեան «Թօփուզում հագդը իշլուն» չպիտի առնուն և վայելեն մարդիկ, մօտ է ժամանակն երբ նա որ աւելի գիտի և կարէ, յառաջ պիտի անցնի կոխելով անճարակ վայրենեաց վերայ:

Պէտք է նաև յայտարարեմք թէ Ամերիկայի պանդուխտ Հայերուն բաւական մէկ մասն կայ որ ԼՐՋՕՐԷՆ

կը մտադրէ հայրենիք վերադառնալ ի պատեհ ժամուն։ Այս տարի գուցէ 30—40 Հայ միայն վերադարձաւ, բայց եթէ Թուրքիա քաղաքական լաւ փոփոխութիւններ կըրէ, եթէ հայաշատ գաւառաց մէջ դաժան հարստահարութեանց տեղ վարչային բարեկարգութիւններ գործադրուին և մարդիկ ապատ լինին աշխատելու և իրենց քրտանց պտուղն վայելելու, տարակոյս չունիմ թէ Հայեր հարիւններով պիտի վերադառնան հայրենիք։

Եթէ բարեկարգութեան օրն ծագի ներկայէս 5 կամ տասն տարի յետոյ առ անագանն, յայնժամ Ամերիկայի հայ պանդուխտներու գոնէ մէկ չորրորդն կը վերադառնայ ի Թուրքիա։ Հաւատացէք թէ Ամերիկայէն վերադարձող 2,000 Հայեր կրնան բազում օգտակար արհեստներ և միանգամայն ճարպկութեան, ձեռներիցութեան ոգի տանիլ և խմորել հայրենիքն։ Այդ պարագայի տակ կրնայ ազգն ալ միխիթարուիլ, քանզի թէև Ամերիկայի մէջ բիւր մի կորուսանէ իւր որդիներէն, մեծ շահ կ'ունենայ եթէ հարիւրին տասն կամ քսան տոկոսն վերադառնայ հայրենիք։

Թող ուրեմն Ամերիկայի մշակեալ և հայրենասէր Հայերն ջանան վառ պահել մեր պանդուխտ եղբարց մէջ հայրենիքի սէրն ու կարօտն, մինչեւ որ հասնի այն օրհնեալ օր երբ Օսմ. զեղծ կառավարութիւն պիտի ուժասպառ կործանի իբրև փտած դրութիւն և աւելի խղճամիտ ու ազատամիտ վարչութիւն մի պիտի յաջորդէ այնմ։

Թող մեր երիտասարդք այս յուսոյ համաձայն յօրինեն իրենց ծրագիրներ. քանզի Օսմ. Պետութիւնն իւր ներկայ ուղղութեամբ չկրնար այլ ևս երկար ընթանալ առանց յանդունդ կորստեան դահավիժելու։

Թող հայ երիտասարդին սիրտն միշտ տրոփէ այն քաղցր յուսով թէ մի քանի տարիէն պիտի վերադառնայ տանելով հայրենիք բարոյական և նիւթական գանձ և անդ, հայրենի ասպարէզի վերայ, պիտի անցունէ իւր կեանքի հասուն և արդիւնաւէտ մէկ մասն։

Այդ քա՜ղցր, այդ կենսատու յոյսն է որ կը ընու այս տողերն գրողին ալ սիրտն։

Ո՜ Հայրենասէր եղբարք իմ, սիրտ առէք և ձեր կարօտոյ արտասուօք լեցուն աչքերն յաճախ դարձուցէք այն կողմ ուր են ձեր ընտանիք ու հայրենիք։

ԹՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱԽՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՆՐԷՔ

Ա.

Աշխարհս լի է ապրող, կենսունակ դոյութիւններով— կենդանեօք և բոյսերով։ Ծովն ու ցամաք խըռնեալ են բազմութեամբ արարածոց, որոց շնչին մէկ նըմոյշն միայն մեր աչաց կը հանդիպի։ Թո՛ղ ծովուն խորութեանց մէջ թափառող կամ նստող անհամար բազմութիւնն, նոյն իսկ ցամաքին բնակչաց ո՛րքան փոքր առհարիւրն ծանօթ է մարդուն։ Ո՛րքան անհուն անտառներ կան—և անտառն ոչ այլ ինչ է բայց եթէ քաղաք կամ աշխարհ որոյ բուն բնակիչք ծառերն են — մարդութեան հազիւ ծանօթ, որոց մէջ յաղթ և բարձրաբերձ ծառերու միլիոններ կ'ապրին հարիւրաւոր տարի և վերջապէս կ'իյնան կը մեռնին առանց երբէք մարդկային ակնարկի հանդիպելու։ Ո՛րքան գեղափթիթ ծաղկունք կ'ածին, կը պճնուին, կը բուրեն և կը թառամին դաշտաց, լերանց և խորափիտներու մէջ առանց երբէք զննող և զմայլող աչաց մէկ ակնարկին արժանանալու։

Անտառ կոչուած բուսական քաղաքներն իրենց հովանւոյն և պտղոց առատութեամբ գործունէութեան և հանգիստ ապրուստի ասպարէզ կ'ընծայեն կենդանեաց, և սոքա կ'երթան իրենց բնակութիւն հաստատել յանտառս, ուր աշխատասէր մրջիւններու բազում քաղաքներ կը ծաղկին, թռչնոց գաղթականութիւններ կը հաստատուին և բաղդախնդիր աւազակներ—գայլեր, արջեր ու վագրներ— իրենց որջեր կ'ընտրեն։

Անտառին մէջ ամեն օր զառամեալ ծառեր կիյնան կը մեռնին. այնպէս որ՝ ըստ տեսակին՝ անտառ կայ որոյ բոլոր ծառերն հարիւր կամ երկու հարիւր տարիէն կը նորոգուին, հին սերունդն կ'երթայ եւ նորն յաջորդած կը լինի։

Այդ մեռած ծառերն ո՞վ կը թաղէ։ Արջն ու գայլն բնաւ հոգ չեն ըներ, և ոչ թռչնոց փոյթն է։ Հարկ է սակայն որ մեռեալն թաղուի և հողին խառնուի, «հող էր ու ի հող դառնայ,» որպէս զի նորերուն տեղ լինի և մանաւանդ հողն պարարտ մնայ։

Բնութիւնն իմաստուն կարգադրութիւն ըրած է այդ մասին։ Մեռեալ ծառն փոշիացնելու և հողին խառնելու պաշտօն ունեցող ահագին բազմութիւն ստեղծած է, քան զաւազի հատիկներն աւելի մանր արարածներ, որք կը յարձակին մեռեալին վերայ և զայն քիչ ժամանակէն կը մանրեն, կը լուծեն, կը փոշիացուցեն և հողին կը խառնեն—կը թաղեն։

Այդ փոքրիկ արարածք այնչափ մանր են որ մարդկային աչաց աննշմարելի են. միայն մանրացոյց գործիով կրնան նշմարուիլ, այդ պատճառաւ կ'անուանեմք զայնս մանրէք, այսինքն մանր գոյութիւնք։ Եւրոպեան լեզուաց մէջ անոնք կը կոչուին միքրոպ, պասիլ, պաքթէրի և այլն ըստ տեսակին։

Մանրէք ոչ միայն մեռեալ ծառերն կը թաղեն այլ և մեռեալ կենդանիներն ու մարդիկն հողին խառնելու պաշտօն ունին։ Եթէ գերեզմաններու դիակներն ժամանակաւ հող կը դառնան մանրէից շորհիւն է։

Ուրեմն մանրէք շատ օգտակար և բարի գոյութիւններ են որք առանց մեզ երևնալու, անձայն և համեստ իրենց պաշտօն կը կատարեն և երկրին առողջութեան և յուռթիւթեան համար անգին ծառայութիւն կը մատուցանեն։

Բայց մանրէից ամենն այդքան բարի չեն. կան նաև չարեր։ Հաստատուած է թէ նոքա մեռեալն հողի վերածելու կարողութենէն զատ ունին նաև կենդանին մեռցուցանելու կարողութիւն։

Այդ չարագործ տեսակաց գոյութիւնն ճանչուած է մանաւանդ շնորհիւ մեծահռչակ գիտնական Փասթէօռի։ Այս Ֆռանսացին է որ նախ և յառաջ գիտնական փորձերով ապացոյց բժշկական աշխարհին թէ յիրաւի մանրէք են որ այս ինչ հիւանդութիւններ յառաջ կը բերեն կենդանեաց մէջ։

Ասոր վերայ բազում գիտունք սկսան իրենց ուշ և ուրուշ նուիրել մանրէից ուսումնասիրութեան և արդէն անթիւ են այդ անտեսանելի գործիչներու վերայ եղած հրատարակութիւններն։ Հասարակ ժողովուրդն ևս հետաքրքրուած է այս խնդրով՝ իմացած լինելով թէ հնոտախտի, թոքախտի, ծաղիկի և այլ փոխանցական սոսկալի ախտերու գործիչներն այդ չարաճճի մանրէք են։

Բ

Թէ մանրէք յիրաւի կը կոչուին մանրէ, ամեն ոք պիտի ընդունի եթէ ըսեմք թէ նոցա հինգ կամ տասն հազարն իրարու ետևէ իրենց երկայնութեամբ եթէ պառկին՝ հազիւ մէկ հազարերորդ մէթր տեղ կը բռնեն։

Մանրէից այդ անչափելի, աներևակայելի մանրութեան կը հաւասարի նոցա անթուելի թիւն։ Բազմամարդ քաղաքաց տներուն մէջ նստած փոշւոյ ամեն մէկ կրամն կը պարունակէ մէկ կամ երկու միլիոն մանրէ։

Ո՞վ կը մտածէ թէ իւր սենեկին մէջ արարածներու այդպիսի բազմութիւն կ'ապրի։ Ցիրաւի անդտին ի

սկզբանէ մարդիկ կրցած են դիտել թէ ճեղքէ մի ներս ի մթին սենեակ մուտ գտնող արևու ճաճանչն, իբրեւ մոգական գաւազան, յերև կը բերէ չամանթաղներու կամ մղեղներու խիտ բազմութիւն որ սովորական լուսոյ մէջ աննշմարելի է։ Միայն մանրացոյցն, այդ հրաշազան գործին, կարող ըրած է զմարդ տեսնելու այդ անտեսանելի արարածներն, և թուելու անոնց անհամարթիւն։ Ներկայ ժամանակաց մեծ սքանչելիքներէն է արբարև մանրէից աշխարհներու գիւտն։ Եւ բժշկական գիտութեանց մէջ կարեւոր յեղափոխութիւ գործել ըսկսած է այն ծանօթութիւն թէ այդ թագուն աշխարհներու բնակիչք կարի մեծ դեր կը կատարեն կենդանեաց և մարդոց բարձրագոյն աշխարհներուն մէջ։

Մանրէից տեսակներ և ձևեր շատ են։ Է որ գնդի և է՝ որ գաւազանի ձև ունի։ Ընդհանրապէս կարող են մանրէք բիւր տեսակ շարժումներ ընել։

Մանրէ մի այնպիսի արագութեամբ կը շատնայ որ 48 ժամու մէջ 16 միլիոն անհատից նախահայրն կը լինի։ 74 ժամ միակ մանրէի մի սերունդներն դիտող մարդ մի կրնայ տեսնել 200 սերնդոց անցնիլն իւր աչաց առջևէն։ Կրնաք հաշուել թէ մանրէի մի կեանքն, մանկութիւնն, չափահասութիւն ու ծերութիւնն որպիսի արագութեամբ կ'անցնին։ Այն մանրէն որ ծնաւ այս դաս կարդալու սկսած պահուդ, արդէն քսան տարեկան է։ Դու չե՛ւ այս դասի ընթերցումն աւարտած՝ նա այր կատարեալ կը լինի և թոռներու տէր։

Մանրէք սերունդ հանելու ուրիշ եղանակ ունին։ Գնդակերպ մանրէ մի մէջտեղէն տակաւ նեղնալով վերջապէս յերկուս կը բաժուի, ապա իւրաքանչիւր կէս իբրը ամբողջ անհատ նոյնպէս կը բաժնուի յերկուս, և այսպէս շարունակ։ Տեսակ ալ կայ որ չորսի կը բաժնուի։

Բարձր տեսակէ կենդանեաց և բուսոց սերունդ հանելու կերպին աւելի մօտ կուգայ մանրէից այն տեսակաց սերունդ հանելու կերպն որով մանրէն փոխանակ հաւասար մասանց բաժնուելու, մէկ կողմին վերայ ծայր մի դուրս կուտայ, որ ապա բաժնուելով մարմնէն կը զատրգանայ և կը լինի անկախ անհատ։

Մանրէք ամենուրեք են. ջրոյն մէջ, հողոյն մէջ և մթնոլորտին մէջ։ Փորձք ցուցած են թէ ծովու օդն իբր հազար անգամ աւելի մաքուր է քան զքաղաքացն։ Նըմանապէս լեռնային օդն յոյժ մաքուր է։ Ալպեան լերանց վերայ կատարուած նոր փորձեր հաստատեցին զայս։ 2700 լիտր օդ մանրացուցական վերլուծութեան ենթարկուեցաւ միանգամ՝ 2000էն 4000 մէթր բարձրութեան վերայ, և բնաւ ամենեւին մանրէ չգտնուեցաւ։

(Շարունակելի)

ՀՆՏԱԽՏԻ ՆՈՐ ԴԱՐՄԱՆՆԵՐ

Փարիզէն Նիւ Եուք Հէրալտի ուղեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ մեծանունն Փասթէօռ հնտախտի պատուաստն գտած է և արդէն զմանս պատուաստած է։

«Նոր-Դար»ին և այլ կովկասեան հայ թերթից մէջ հրատարակուածին համեմատ այն կողմի Հայերն ալ հընտախտի ուշագրաւ դարման մի յաջողութեամբ ի գործ դրած են բազմաթիւ հիւանդաց վերայ։ Դարմանն է հիւանդին բոլոր մարմինն քացախով ոսատիկ և երկարօրէն շփել։ Շփելն հայկական վաղածանօթ դարման մ'է սատիկ ցաւերու դէմ, փորի ցաւի դէմ մասնաւորապէս, և արդարև շատ փայլուն արդիւնք տուած է շփող կանանց ձեռքով։ Թէ հնտախտի նման սոսկալի ցաւի մի դէմ որքան զօրութիւն ունի շփելն, ճմլելն, դժուար է որոշապէս դատել լրագրաց մէջ արուած տեղեկութիւններէն որք կրնան չափազանցուած լինիլ։ Փոքր ի շատէ յաջողեալ ամեն դեղ ու դարման, փոյթ չէ որ ախտի դէմ և որ երկրի մէջ, մեծ աղմուկ կը հանէ և մեծ յոյս կը գրգռէ, բայց շարունակեալ փորձերն յաճախ, դըժբաղդաբար, կը ցուցնեն թէ նորելուկ դարմանն ոչ ինչ առաւելութիւն ունի հնոց վերայ։

Երանի՜ թէ հնտախտի շփմամբ դարմանին յաջողութիւնն կովկասեան հայ բժշկաց միջոցաւ ստուգուէր։ Այդ յաջողութեան վերայ մեզ տարակոյս ներշնչող պարագայ մ'այն է որ շփման խնդիրն երևան ելաւ երբ հնտախտն արդէն ամիսներէ ի վեր կայր և ինքզինք սպառելու մօտ էր, քանզի ծանօթ իրողութիւն մ'է թէ հնտախտն և նման հանրախտք նուազ մահաբեր կը լինին երկրի մի մէջ իրենց ընթացքի վերջին ատեններն։ Այդ վերջացող միջոցին է որ ոևէ դարման կրնայ փայլուն բայց պատիր յաջողութիւն տալ՝ դանելով իւր դէմ ծերացած, ուժաթափ թշնամին։

Սակայն եթէ շփմամբ դարմանին իրական աղդուութիւնն դրականօրէն հաստատութիւն գտնէ, բժշկութիւնն չպիտի շուարի փոքր ի շատէ բանաւոր մեկնութիւններ յերիւրելու։ Անդամոց շփումն կը դիւրացուցէ մակերեսային շրջանառութիւնն արեան, և փորի վերայ կատարուած ճնշումներն կարող են աղեաց զօրութիւնն գրգռել և այժ տալ այն միլիոնաւոր փոքր մասնկանց որք աղեաց մէջ կը գտնուին և որք դժուարին պատերազմի բռնուած կը լինին հնտախտի մանրէից (պասիլ) դէմ։ Ընթերցողք գիտեն թէ հնտախտն անվրէպ իւր բանակատեղի կ'ընտրէ աղեաց այս ինչ մասերն. Արդ, բնախօսօրէն անհեթեթ չլինիր ենթադրել թէ աղեաց վերայ գործուած արտաքին ուժգին ճնշումներն օգնեն աղեաց արտաքսել բոլորովին թշնամի մանրէքն և վերջ տալ պատերազմին, այսինքն հիւանդութեան։

Բայց կը վախեմք թէ չափազանց հեռու կ'երթամք այս ենթադրութեանց մէջ, մինչ շփման ինպատ հանուած զրոյցն դեռ ստուգութիւն առած չէ։

Եթէ բարեբաղդաբար շփման յաջողութիւնն ընտուգուի, ոչ միայն աշխարհ և բժշկութիւնն երախտապարտ կը մնան Հայոց, որ դարմանին հնարիչներն են, այլ և ուրիշ ախտերու, դժաղութեան (dysenterie), ժանտաղութեան (fievre typhoide), աղեաց ծիւրախտի (tuberculose intestinale), և աղեաց հարի (catarrhe intestinal) և այլ նման ախտերու դէմ ալ կընայ նոյն դարմանն նոյնպէս ծառայել։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 26 Օգ. 92

Բարեկամ,

Կարծես թէ Թուրքիա աղտի տակառ մ'է՝ Ռուսիոյ բոլոր անմաքրութիւններն մէջը առնելու համար մեծ փորով և դիւրաբաց բերանով։ Նաղելի Չէրքէզներն բիւրաւոր եկած էին Մոսկովայ երկրէն, այժմ ալ անուշահոտ Հրէաներ կուգան։ Հրէից ժրագլուխ և լիաքսակ Ցանձնախումբ մը կ'աշխատէր ատ հաւանեցուցնել կառավարութիւնն որ Ռուսիայէն արտաքսուած Հրէաներն հաստատուին ի Թուրքիա, և վերջապէս յաջողեցաւ։ Ոստիկանութեան պարկեշտափայլ նախարարն բարեհաճեցաւ կարգադրել որ Հրէայք յղուին Զմիւռնիոյ՝ Եանեայի և Սելանիկի վիլայէթներն։ Այսպէս կասկածելի գաղթականներ կը դարձուին հնտախտի երկիւղով բռնուած ժողովրդոց վրայ, որոց մէջ կան ոչ սակաւք որ նուազ կը սոսկան հնտախտէն քան ի Հրէից, զի կը մտածեն թէ հնտախտն կ'երթայ բայց Հրէայն կը մնայ։ Մեր բարեխիղճ և մաքրասէր կառավարութիւնն իբր թէ բարեքելու համար մայրաքաղաքին առողջապահական վիճա-

կըն, վանդի կը մանէ գաւառներն. մօրն գոգէն ազ-տերն կ'աւլէ զաւակաց ծոցն։

Ուսուցչական ժողովն սկսաւ իւր երկրորդ նստա-շրջան։ Այս կրնայ նկատուիլ արդիլեալ Ազգային ժողո-վոյ կրճատեալ և ամփոփեալ ձեւն, սա միթարական առաւելութեամբ որ ուսուցիչք միայն են ժողովականք, և իրենց միջոցաւ իրագործելի կրթական բար' կարգու-թեանց վրայ կը վիճին— այսինքն թէ ինչպէս պէտք է նախակրթութիւնն ծրագրել և ձեռնհաս պաշտօնեաներ պատրաստել— խնդիր արդարև կենսական, քանզի ազ-գային դաստիարակութեան հիմունք մասնագիտօրէն վե-րակազմելու աւագ խնդիրն է այն։

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԸՈՒՆՕՐ ԵՒ ԸՍԸՑՈՒՆՕՐ ԱԿՆԱՅ

Կատուն մսին չէ հասեր ասօր ուրբաթ է ըսեր։
Երկու պինտը պատ է պառեր։
Արունն արունով չեն վլար։
Շունը կու ծեծին տիրուն խաթրը կու բռին։
Ստամպոլ տ'երթաս պարտք տի բերես, Պզմշէն գնա՝ փարա բեր։
Օդը ելլես չեմ հաւատար։
Խենթը աղջիր (եղջիւր) չի կալլեր։
Զեռքը չան կրիճին է վլացեր։
Պատին հետ պակուեր է։
Դողալ դե՞ղ է։ (Ա՞յդքան պատուական կը սեպես։)
Քինթը Պոքուտէն ջուր կը խմէ։(1)
Բոշայենց Անանիկէն ալ վար է։
Հաւկիթին մէջ մազ կու բռես։
Մազը պարանով չին շալկեր։
Քարէն ջուր կու հանէ։
Թաթ ետի կրունկ էոջի բաներ կ'անես
Եա աղը պակաս է եա մաղը։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՔ

Մէկ ճղէն ու հազար տերևէն լընիս։
Իստակ բէխտ լընիս։ (Կոյս աղջկանց կ'ըսեն)։
Զեռքդ դալար։
Ճերմակ մօրուք լընիս։
Հագրի պէտէլ լընիս։
Տէրը օրհնէ Տէրտէրը պսակէ։
Արև ու լուսնկայ լընիս մեր վրայ ցաթես։

ԿԵՐ ՈՒ ԽՈՒՄԻ ԱՌԹԻՒ

Աստուած օրհնէ չէն պահէ։
Սեղաննիդ դրման մնայ։
Աս ջրին պէս երկան արև լընիս։(2)
Շատ գաք ուրախութեամբ։
Մարսական։ (Յետ կերակրոյ լուացուողին կ'ըսուի։)
Հաւսարական։ (Լուացուողն կը պատասխանէ։)

ՃԱՄԲՈՐԴ ՃԱՄԲԵԼՈՒ ԱՌԹԻՒ

Երթաս բարով ու դաս բարով։
Զարն ենթաս կանաչ դառնաս։
Ոտկունքդ քարը չզարնես։
Հող բռնես ոսկի դառնայ։
Աստուած բանիդ գործիդ յաջողութիւն տայ։

---

(1) Պոքուտ Ակնայ արևելեան կողմի լերան գագա-թին մօտ բարձր վայր մ'է ջրաբեր և դալարաւէտ։

(2) Մերունին կ'ըսէ դեռահասին, մատուցուած ջուրն խմելէ յետոյ։

ՀՐԷԱՑՔ Ի ՀԱՅՈՑ ԹԷ ՀԱՅՔ Ի ՀՐԷԻՑ

«Հանդէս Ամսօրեայ»ի Սեպտ. թուոյն մէջ համա-ռօտութիւն մի կը գտնեմք ճառին զոր Լուշան գերմա-նացի գիտունն խօսած է մարդաբանական ժողովոյն մէջ անցեալ ամառ, և որով հաստատած է թէ Հրէայք Հա-յոց կը պարտին իրենց կարճ գանկն և մառնաւոր կազ-մութեամբ քիթն։ Ըստ նորա կարծեաց Փոքուն Ասիոյ նախաժամանակի հայացեղ նախաժողովրդէն անցած են Հրէից յիշեալ մարդաբանական յատկութիւնք։ Ս. Գիրք այդ հին Հայերն «Հեթացիք» (Քետացիք ըստ Հայ թարգ-մանութեան) կ'անուանէ։

Նաև Վիրխով, մեծանուն գիտունն և բժիշկ, իւր ճառախօսութեան մէջ, Փոքուն Ասիոյ մէջ իւր ըրած պեղմանց արդիւնքին յենլով հաստատած է նոյնն, այս-ինքն թէ Սեմականաց մէջ կարճ գանկ ունենալն յառաջ եկած է Հայոցմէ, որ խառնուած են առաջնոց հետ։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Կիլիկիայէն կը գրեն մեզ Օգ. 17 թուականաւ, թէ Այնթապի Ֆռանսական դեր-հիւպատոսն Հալէպէն վե-րադարձած է Այնթապ, և ծեծի դէպքին քննութիւն-ներն կատարուած լինելով երկու զապթիյէներ երկուա-կան տարի բանտարկութեան և իբր տասն հարուստ թր-քեր երկու ամիս բանտարկութեան դատապարտուած են։

Ֆրնուզի Սր. առաջնորդին բանտարկութեան առիթ տուող բանն ալ կ'ըսուի թէ այն եղած է որ իբր թէ նորա զինուորական հագուստով մէկ պատկերն գը-տած է կառավարութիւնն։

—Միացեալ Նահանգաց կառավարութիւնն որ ցայ-ժըմ այնքան թոյլ կացք մ'ունէր հանդէպ Բ. Դրան, ըս-պառնալից և վճռական կացք մ'առած է վերջապէս և եր-կու մարտանաւեր յղած է թրքական ջրերն։ Այս շարժ-ման առիթն է Զմիւռնիոյ կողմն Ամերիկացւոյ մի տան հրկիզումն, որոյ հեղինակներն պատժելու վարանած է Դուռն։

ՄԱՀԱԳՈՑԺ

Պատ. Մարտիրոս Շմաւոնեան որ Պէպէքի նախկին ընթացուարտներէն էր և բողոքական Հայոց կղերական դասին մէջ բարձր տեղ մի բռնած էր, յետ իբր 40 տա-րի Խարբերդի բողոքական ժողովուրդն հովուելոյ, կընքած է իւր մահկանացուն ի Կ. Պոլիս։ Շմաւոնեան բազ-մաճաշի հմտութեամբք ճոխաւեալ միտք մունէր և մեծ սիրտ մի։ Խարբերդցիք զնա պապա կը կոչէին, և յիրաւի դաւառին Խրիմեանն էր նա։ Այն ատենները երբ դեռ բողոքականաց և լուսաւորչականաց միջև ցրտութիւն կար, Շմաւոնեան իւր բանիւք և վարուք, իւր զգօն ազ-գասիրութեամբ արծարծեց իւր ժողովրդեան մէջ առ-կայծեալ ազգային զգացմունքն։ Նորա բարեսիրել դէմ-քէն ազնուութիւն և բարութիւն կը ճառագայթէին։ Խարբերդի դպրոցին ունցեալ լաւ օրերուն մէջ Շմաւոն-եան հոգեբանութեան ուսուցչապետն էր անդ և աշա-կերտաց ճառերն կը քննադատէր։ Այն մի քանի երի-տասարդներ որք ի Խարբերդ և ի Պոլիս, այս տարի կա-ռավարութեան ձեռքն նեղութիւն և բանտարկութիւն կրեցին իրենց 10 տարի առաջուան դպրոցական ճառե-րուն համար, էին Շմաւոնեանի ներշնչեալներն։

Գ. Մարտիրոս Շմաւոնեան բոլոր հայ Ազգին կոչ-մանէ Ներսէս Շնորհալւոյ նոր մէկ մարմնացումն պիտի

նկատուէր եթէ իւր բարձր տպանդ և մեծ հոգին ծանօթ լինէին նմա։

Մեք կ'ողբամք զմահ այդ պատուական անձի զոր ի մօտոյ ճանաչած եմք 17 տարի առաջ։

Հանգուցելոյ որդին, Արշակ Շմաւոնեան, ի Զուիցերիա ուսեալ, փաստաբան է ի Կ. Պոլիս։

Ահաւասիկ Գ. Մ. Շմաւոնեանի մէկ ոտանաւորն։

ՍԻՐԻ՛Ր ՀԱՅՐ

Սիրէ՛ Հայը, թէև ըլլայ աղքատ՝ տնանկ անկարող,
Վրան գլուխը հին ու մին դոնէ վ դուռ մուրացող,
Անունն է Հայ պարտ է քեզ
Սիրել զնա Հայու պէս։

Սիրէ՛ Հայը, թէև ըլլայ հարուստ փարթամ մեծատուն,
Եւ ունենայ պէյ՝ էֆէնտի, կամ ամիրա պատուանուն.
Անունն է Հայ պարտ է մեզ ևն։

Սիրէ՛ Հայը, թէև ըլլայ հայր սուրբ՝ տէրտէր՝ վարդապետ,
Վրան փիլոն, ծոցը սուրբ խաչ, կաթողիկոսն իւր վարպետ.
Անունն է Հայ պարտ է մեզ ևն։

Սիրէ՛ Հայը, թէև ըլլայ Լուսաւորչեան՝ Բողոքական՝ Պապական,
Ըստ քոյ կարծեաց ճիշդ սնապաշտ՝ հերետիկոս մարդաւան։
Անունն է Հայ պարտ է մեզ ևն։

Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԲԻՈՆԵԱՆ

ՀՆՏԱԽՏՆ

Վերջին օրերս նորանոր նաւեր հասան եւրոպայէն ի Նիւ Եորք, ոմանք հնտախտաւորներ կրելով և ոմանք ոչ։ Վարակեալ նաւուց միոյն Համպուրկէն ճամբայ ելնելէն մինչև Նիւ Եորք հասնելու միջոցին՝ ուղեւորներէն 32 հոգի հնտախտէ բռնուած և մեռած էին, և ծովային թաղումով թաղուած։ Այդ պիսի նաւուց բոլոր ուղեւորներն կը տարուին կղզի մի և քառանթինի կ'ենթարկուին։ Միւչև իսկ այն նաւեր, որոց մէջ հնտախտի դէպք պատահած չէ, մի քանի օր հսկողութեան կ'ենթարկուին յապահովութիւն։ Նիւ Եորքի կառավարութիւնն նոր կղզի մ'ևս գնեց 210 հազար թալէրի և զայն ևս յատկացուց քառանթինա պահել տալու. վասն զի ախտաւորներն կը շատանան և հսկողութեան ենթարկուածներն ալ աւելի։

Շնորհիւ այս խիստ միջոցներուն Նիւ Եորքի մէջ հնտախտի ոևէ դէպք չէ պատահած ցայսօր։

— Հռովմի Պապն, Լեւոն ԺԳ, որպէս կը տեղեկանամք ՄՇԱԿէն, հնտախտի առթիւ կաթոլիկ եպիսկոպոսացյղած է կոնդակ մի, որով կը պատուիրէ ժողովրդեան ամեն տեսակ ոնդարար կերակուր ուտել և այլ ևս պահք չպահել, ցուցնելով թէ պահքը հայրապետաց կարգադրութիւնն է և հակառակ է Աւետարանի ոգւոյն։

Կոնդակն Օգ. 7ին կարդացուած է Ռուսիոյ հայ. կաթոլիկ եկեղեցեաց մէջ, և քարոզիչք ալ ողջամիտ մեկնութեամբք ռամկին հասկցուցած են թէ անոնց բանջարեղէններ ուտելով ինքզինք հնտախտի նշաւակ ընել ոչ թէ բարեպաշտութիւն այլ մեղք է և ամօթ, թէ ճշմարիտ պահքն է հրաժարիլ ընկերին միսն ուտելէ, տհաս կամ փտած պտուղներէ, ցոփ և շռայլ կեանքէ։

«Մշակ» բաղձանք կը յայտնէ որ Էջմիածինն ալ հանդոյն կոնդակ մի ուղղէ իւր ժողովրդի։

—«Արձագանք»ի մէջ կը կարդանք.— «Հաշտարիւանում, այնտեղի լրագրի ասելով, Հայերի մէջ խօլերայից մեռնողների թիւը շատ չնչին է։ Այս բանը առաջ է գալիս գլխաւորապէս այն հանգամանքից, ասում է «Ասարաս Լիստոկը» որ հայ հասարակութիւնը կարդալով այն խրատները, թէ ինչպէս պէտք է պաշտպանել իրան խօլերայի միջոցին, անմիջապէս ձեռք բերեց ախտահարիչ միջոցներ, արգելուեց նոյն իսկ ամենաչքաւոր դերդաստաններից եփ չտուած ջրի գործածութիւնը, դադարեցին համարեա թէ ուտել մինչև անգամ իրենց սիրած կանաչին։»

—«Մշակ» ուրախալի լուր մի կը հաղորդէ։ Տրապիզոնցի Թիֆլիսարնակ օրիորդ Վարդուհի Ցակոբեան Ցիւրեխի, Ժընէվի և Գերմանիոյ Լայպցիգ քաղաքաց համալսարաններուն մէջ փոփոխապէս ուսանելով՝ այս անգամ Զուիցերիոյ Պէռն քաղաքի համալսարանի փիլիսոփայական բաժնին տուած է հարցաքննութիւն և արժանացած է փիլիսոփայութեան տոքթորի ուսումնական աստիճանին։

ԸՕԴ

«Հայք»ի բաժանորդ կրնաս գրուիլ
այժմիկ յղելով 60 սէնթ՝
տարուոյս մնացեալ երեք
ամսոց համար.—
(Հոկ. Նոյ. Դեկ.)
Դիւրին է նամակի մէջ դնել 12 հատ
5 սէնթնոց փոսթըլ սթէմփ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

—Լաւ պատճառ։ Ան տիկին Ֆ.ն ալ ինչ անպիտան կնիկ է, աւելի կը սիրէ իւր շուն քան իւր տղայն։

—Հարկաւ, զի շունն լաւ ցեղէ է։

—Փոքր աղջիկ մի փոքրիկ յանցանք մի գործեր էր, մայրն խոսիւ ըսաւ որ երթայ սենեակն և Աստուծմէ ներում խնդրէ։ Երբ սենեակէն վերադառցաւ, զուարթ էր աղջիկն։ «Խնդրեցիր Աստուծմէ որ ներէ,» հարցուց մայրը։ Այո խնդրեցի,» պատասխանեց «և Աստուած ըսաւ «բան մի չէ։» (and God said: Do not mention it:)

—Ճաշարանին մէջ— Տղա՛յ, աս միսը քանի՞ օրէ ի վեր կը պահէիք։— Զգիտեմ, Տէր, զի ես հազիւ երկու շաբաթ է որ եկած եմ։»

—Հայրի՛կ, ինչո՞ւ բոլոր շաբթուան հացը մէկէն չենք ուզեր և «մեր այսօրուան հացը տուր» կ'աղօթենք ամեն օր։

Հայրիկ դեռ կը մտածէր երբ եղբարց մանկագոյնն պատասխանեց, Որպէս զի թարմ հաց ունենանք ամեն օր։»

ՎԵՐՋԻՆ ԼՕՒՐԵՐ

—Հնտախտն, ըստ այս առաւօտու (15 Սեպտ.) հրատարակութեան, մուտ գտած է ի Նիւ Եորք, ուր 6կամ7 հոգիք մեռած են այդ ախտէն վերջին եօթնեկի մէջ, քաղաքիս այլ և այլ կողմերն։

Վախ չկայ որ ախտն տարածուի քաղաքիս մէջ, և ուստի ամեն ոք պարտի լինիլ զգուշաւոր բայց աներկիւղ։

—Նաւային ընկերութեանց գործակատարք կը ծանուցանեն այսօր թէ բոլորովին դադարած են գաղթական բերելէ յայս երկիր։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան։ բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

— «ՀԱՅՐ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէռ 5 սէնթի։

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան։

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԳՍ ՊԱՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբոց կէսէն հաշուելով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակաթեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն։

Մինչ Սեպտեմբեր հասցէս է—
15 Grand Central Block, Saratoga Springs N. Y.

ՓՈԽՄՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar St. N. Y.

R·I·P·A·N·S TABULES

REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԳԵՂԱՊԱՏԿԱՊՈՐԾ
(Հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղադիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

MARK F. COSGROVE
ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՑԿԵՐ ԵՒ ԸՐՊՊԸՐՆԵՐ
78 Front St., Corner Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ։ ուր կրնաս գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ըրպպըրներ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

N. DESCHAMPS
Ն. ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութը դիմացկուն և ժան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին։ Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ։ Փորձէ և պիտի համոզուիս։

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ